

HHT - Hask Hayagitakan Taregirk'

JSAS - Journal for the Society of Armenian Studies

ODB - Oxford Dictionary of Byzantium

ODLA - The Oxford Dictionary of Late Antiquity

RHC - Recueil des historiens des croisades - Document armeniens

Sion - Official monthly of the Armenian Patriarchate of Jerusalem

ZDPV - Zeitschrift des deutschen Palastina -vereins

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Չնայած ոչ տեղը, ուր Աստուած է, ոչ ալ արտաքին տեսքը, որ Ան ունի, չենք գիտեր եւ չենք տեսներ, սակայն Անոր կը ճանչնանք Իր գործերով: Նոյնը կարելի է ըսել եւ Աստուածային Հոգիի, եւ մարդկային հոգիի մասին, որու ոչ տեղը, թէ ուր կը բնակի, ոչ ուրուագիծը, որ ան ունի, չենք գիտեր եւ չենք տեսներ, սակայն անոր գործերակերպով կ'եզրակացնենք, որ ան կայ՝ առանց որեւէ շփոթի, պարզ, մասերու չբաժնուող, չանհետացող եւ մշտապէս ապրող՝ որպէս Աստուծոյ պարզեւ:

ԴԸՄԻՏՐԻ ՍԵՐԿԷՇԻԻՉ ԱՆԻՉԿՈՎ

Եթէ ջանասիրութեամբ քննենք մեզ հետ կատարուած երբեմնի եւ այսօրուայ դիպւածները, ապա պարզ կը տեսնենք, որ ողջ մեր կեանքը՝ իր մանրամասներով, կախեալ է Աստուծմէ: Կը տեսնենք, թէ Աստուած Իր գոյութեան անքնին պատմութեամբ ինչպէս կը զարմացնէ մեզի, կը ճանաչենք Անոր իմաստութիւնը, կը փառաբանենք Անոր բարեգթութիւնը, եւ, վերջապէս, կը յանգենք այն եզրակացութեան, որ առանց Աստուծոյ կամքի ոչինչ չի կրնար ըլլալ, եւ ոչ մէկ ուժ չի կրնար դէմ կենալ Աստուծոյ նախախնամութեան:

ԴԸՄԻՏՐԻ ՍԵՐԿԷՇԻԻՉ ԱՆԻՉԿՈՎ

Դժբախտութիւններու զգալի մասը վրայ կը հասնէ արիութեան պակասէն. արիութիւն, որ կը ձգէ խօսիլ եւ լսել ճշմարտութիւնը խաղաղութեամբ եւ սիրոյ հոգիի մէջ:

ՀԱՐԻԷԹ ՊԻՉԵՐ-ՍԹՈՈՒ

Երբ ամէն բան շատ ծանր է ձեզի, երբ ամէն ինչ շրջուած է ձեր դէմ, եւ կը թուի՝ այլեւս մէկ վայրկեան անգամ չէք կրնար համբերել, չնահանջէք, չընկրկէք, որովհետեւ հէնց այդ պահուն պայքարը կը դառնայ բեկումնային, եւ հէնց այդ պահուն կ'իջնէ հաւատքի սպասուած ճեղքումը:

ՀԱՐԻԷԹ ՊԻՉԵՐ-ՍԹՈՈՒ